

ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանի ելույթը Թբիլիսիում կայացած «Եվրոպական քաղաքների ցանց» ծրագրի ներկայացմանը 11.11.2013-12.11.2013

Հարգելի գործընկերներ.

ՀՀ Տավուշի մարզպետարանը նախաձեռնել է մարզային մակարդակով ապահովել զբոսաշրջության և դրա հետ անմիջական առնչություն ունեցող այլ ոլորտների տևական զարգացումը, նպաստել համայնքներում առկա ներուժի զարգացմանը ու նորերի ստեղծմանը: Այս նպատակները ժամանակին և որակով իրականացնելու համար նախատեսվել են մի շարք գործողություններ և միջոցառումներ: Քաղաքապետարանները իրենց կարողությունների սահմաններում պատրաստ են աջակցել այս նախաձեռնությանը, և արդեն աշխատանքներ են տարվում «Տավուշի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ ստեղծելու և համապատասխան կարողություններ ձևավորելու ուղղությամբ:

Համագործակցելու ենք բոլոր շահագրգիռ կողմերի հետ և առաջիկա տարիներին նախատեսում ենք.

Տավուշի մարզի տուրիստական ներուժի (պատմամշակութային և տեսարժան վայրեր, ենթակառուցվածքներ) վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում և վերլուծություն.

Եվրոպական ստանդարտներին (GIS) համապատասխանող մարզի և համայնքների տուրիստական քարտեզների մշակում: Քայլուղիների, հեծանվաուղիների և ձիարշավների համար նախատեսված տուրիստական համապատասխան սխեմաների մշակում՝ անհրաժեշտ տեղեկություններով (բարձրություններ, դժվարության աստիճան, երկարություն, նախատեսված տևողություն, այլընտրանքային տարբերակներ, մոտակայքում գտնող կացարաններ, սննդի, առաջին օգնության և վերանորոգման կետեր):

Պատմամշակութային հուշարձանների վերականգնման և պահպանության միջոցառումների իրականացում.

Տուրիստական տեղեկատվական ցանցի ստեղծում (կենտրոններ, ինտերակտիվ հաղորդակցության ցանցի ձևավորում՝ հայերեն, ֆրանսերեն, գերմաներեն և անգլերեն լեզուներով):

Ինչպես նաև իրականացվելու է կրթական միջոցառումներ, որը նախատեսում է տուրիզմի ժամանակակից թեմաներով դասընթացների կազմակերպում և դասընթացավարների թիմի ձևավորում:

Շնորհակալություն ուշադրության համար: